

Ընդհանուր մաքրման ուղղեցույց Բազմամարդ հաստատություններում շնչառական հիվանդությունների դեպքում

Այս տեղեկությունը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր գրառված են հանրային վայրերի, օրինակ՝ հյուրանոցների, եկեղեցիների և դպրոցների մաքրությամբ: Սա **ՉԻ** փոխարինում մաքրման և ախտահանման սովորական կանոններին և ընթացակարգերին, այլ տրամադրում է մաքրման համար լրացուցիչ տեղեկություն շնչառական վարակների տարածումը կանխելու համար, ինչպես օրինակ՝ կորոնավիրուս հիվանդություն-2019-ի (COVID-19) տարածումը:

Աշխատակիցները պետք է օգտագործեն պաշտպանիչ հանդերձանք ու սարքավորումներ, ինչպես նկարագրված է իրենց աշխատանքային կանոնների և ընթացակարգերի մեջ: Ի լրումն, դիմակների կամ հատուկ արտահագուստի անհրաժեշտություն **չկա** սովորական մաքրման աշխատանքները կատարելիս:

Մաքրեք բոլոր առարկաներն ու մակերեսները որոնք հաճախակի են օգտագործվում




Մաքրեք բոլոր այն առարկաներն ու մակերեսները, որոնք մարդիկ հաճախակի են օգտագործում, օրինակ՝ աշխատանքային սեղանները, ճաշելու սեղանները, դռների բռնակները, լույսի կոճակները, բաղնիքի և գուգարանի հարմարանքները, աղբարկղերը, հեռախոսները, հեռակառավարման վահանակները, ստեղնաշարերը, պլանշետներն ու կողային սեղանիկները: Օգտագործեք Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (ՇՄՊԳ) կողմից գրանցված արտադրանք, որը մաքրում (հեռացնում է մանրէները) և ախտահանում է (սպանում է մանրէները): Միշտ հետևեք մաքրող և ախտահանող միջոցների պիտակների ցուցումունքներին:



Կոշտ մակերեսներ՝



- Մաքրեք և ախտահանեք կոշտ մակերեսներն ու առարկաները:
- Կեղտոտ մակերեսները լվացեք սովորական կենցաղային մաքրման միջոցով՝ հեռացնելու համար կեղտը, մանրէները և յուղը: Պարզաջրեք, ապա օգտագործեք ՇՄՊԳ-ի կողմից գրանցված ախտահանիչ միջոց: Պահպանեք արտադրողի կողմից առաջարկվող խտությունը, կիրառման եղանակը և կոնտակտային ժամանակը:
- EPA-ի կողմից գրանցված ախտահանիչ միջոցների բացակայության դեպքում օգտագործեք քլորային (բլիչ)

Ընդհանուր մաքրման ուղղեցույց Բազմամարդ հաստատություններում շնչառական հիվանդությունների դեպքում

	<p>լուծույթ (մոտավորապես 4 թեյի գդալ քլորի լուծույթը խառնելով 1/4 բաժակ ջրի հետ, կամ 5 ճաշի գդալ (1/3 բաժակ) քլորի լուծույթը 1 գալոն (16 բաժակ) ջրի հետ): Քլորային լուծույթը պատրաստեք ամեն օր կամ ըստ պահանջի: Կարելի է օգտագործել թեստային ժապավեններ, որպեսզի ստուգեք լուծույթի ճիշտ խտությունը:</p> <ul style="list-style-type: none"> • Խորհուրդ է տրվում օգտագործել 70% սպիրտային հիմքով ախտահանող միջոցներ կանխելու համար վիրուսների տարածումը, սակայն սպիրտը կարող է արագ գոլորշիանալ և լիարժեք ախտահանում չապահովել: Եթե օգտագործում եք այդ ապրանքները, ապա պահպանեք ցուցումունքներում նշված կոնտակտային ժամանակը:
	<p>Գորգեր, բազմոցներ և այլ ծակոտկեն (ներծծող) մակերեսներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Փոշեծծիչով մաքրեք՝ կանխելու համար փոշու տարածումը օդի մեջ: • Անմիջապես մաքրեք մաքրու մարմնի հեղուկների հետքերը՝ հետևելով կանոններին ու ընթացակարգերին: • Խորությամբ մաքրեք գորգերը՝ հնարավորինս խուսափելով ցայտումներից: • Գորգերը և ծակոտկեն մակերեսները մաքրելու համար անհրաժեշտության դեպքում օգտագործեք գոլորշիով մաքրող միջոցներ:
	<p>Սպիտակեղեն՝</p> <ul style="list-style-type: none"> • Սավանները, վերմակները, սրբիչները, վարագույրները և այլն լվացեք լվացքի կենցաղային օճառով և տաք ջրով (167 °F և ավելի բարձր): Չորացրեք բարձր ջերմության տակ՝ ըստ կանոնների և ընթացակարգերի:
	<p>Սպասք և գործիքներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Լվացեք և մանրագրծեք ափսեները, բաժակները և արծաթե սպասքը լվացող մեքենայի օգնությամբ, կամ ձեռքով՝ օգտագործելով օճառ, տաք ջուր և ՇՄՊԳ-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոց: • Հատակ մաքրող կտորները/հյուսվածքները լվացեք օճառով ու տաք ջրով, մանրագրծեք ՇՄՊԳ-ի կողմից հաստատված ախտահանիչով կամ քլորային լուծույթով, և



Ընդհանուր մաքրման ուղղեցույց Բազմամարդ հաստատություններում շնչառական հիվանդությունների դեպքում

	<p>թողեք որ չորանան: Որպես այլընտրաք, կարող եք օգտագործել նաև մեկանգամյա օգտագործման այլ հյուսվածքներ:</p> <ul style="list-style-type: none"> • Էլեկտրոնային ապարատները ախտահանող անձեռոցիկներով մաքրելուց առաջ ուշադիր կարդացեք ցուցումունքները: Ստուգեք՝ արդյոք Էլեկտրոնային ապրանքը կարող է դիմակայել այդպիսի թաց անձեռոցիկների օգտագործմանը, որոնք օգտագործելիս ցանկացած մակերես երկար ժամանակ խոնավ/թաց է մնում որպեսզի ապահովի ախտահանելու համար պահանջվող կոնտակտային ժամանակը:
	<p>Թափոնների հեռացում</p> <ul style="list-style-type: none"> • Աղբի կամ թափոնների հետ գործ ունենալիս կրեք ձեռնոցներ: • Համոզվեք, որ աղբը հավաքված է ամուր, չարտահոսող (օրինակ՝ պլաստիկե) տոպրակների մեջ, որոնք ամուր կապված են, տեղադրված են աղբարկղերի մեջ և պարբերաբար հեռացվում են տեղանքից: • Բժշկական թափոնների հետ վարվեք ըստ կանոնների և ընթացակարգերի: • Թափոնները մաքրելուց և դեն նետելուց հետո հանեք ձեռնոցները և լվացեք ձեռքերը:
	<p>Մաքրման հետ կապված այլ ընդհանուր ցուցումներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Անմիջապես դեն նետեք մեկանգամյա օգտագործման բոլոր մաքրող միջոցները: • Հաճախակի լվացեք ձեռքերը, ներառյալ՝ աղբի զամբյուղները դատարկելուց և անձեռոցիկների ու նմանատիպ աղբի դիպչելուց հետո: • Մանրակրկիտ ու հաճախակի լվացեք ձեռքերը օճառով ու ջրով առնվազն 20 վայրկյան, կամ օգտագործեք սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց, որը պարունակում է առնվազն 60% սպիրտ: Հետևեք Հանրային Առողջապահության Վարչության ցուցումունքները՝ կապված ձեռքերը ճիշտ լվանալու հետ: http://publichealth.lacounty.gov/acd/handwash.htm